1) «Պրոարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02623953) 2015 թվականի մարտի 1-ին կնքված N Ծ21 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համերգների կազմակերպման աշխատանքների իրականացում՝ 86,477,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սպորտիվնոե վեշյանիե» ԱՈՍԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 7717151510) 2015 թվականի ապրիլի 9-ին կնքված N CB_2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Sistem of a Down» խմբի և «Orchestra 24/04» ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգների տեսանկարահանման ու հեռուստատեսային հեռարձակման ծառայությունների մատուցում՝ 5,599,684 ռուսական ռուբլուն համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) « Զենիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 044525593) 2015 թվականի ապրիլի 2-ին կնքված N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Sistem of a Down» խմբի և «Orchestra 24/04» ֆիլարմոնիկ նվագախմբի համերգների լուսաձայնային սպասարկում և հարակից ծառայությունների մատուցում՝ 9,116,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) « Եվգենի Միշչենկո» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 044525201) 2015 թվականի ապրիլի 6-ին կնքված N 394 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ֆորումի մասնակիցների գրանցման գործընթացի կազմակերպում՝ 1,938,400 ռուսական ռուբլուն համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Ինժեներ Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 31201484) 2015 թվականի մարտի 31-ին կնքված N OB-31.03.2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջոցառումների նկարահանում՝ 48,000 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Կրեատիվ արտիստ էյջանսի» Սիսթեմ Սամեր Քամփ» ՍՊԸ-ի հետ 2015 թվականի մարտի 13-ին կնքված N OB-31.03.2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Sistem of a Down» խմբի համերգի կազմակերպում՝ 435,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Մեդիակոնգրես ժուրնալիստով Եվրոպի ի Ազիի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09169156) 2015 թվականի փետրվարի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արարատի ստորոտին» մեդիաֆորումի կազմակերպում՝ 24,300 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507456) 2015 թվականի ապրիլի 30-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 11,536,644 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1125 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2015 թվականի հոկտեմբերի 12-ի N 07/80-2/30155-15 և հոկտեմբերի 9-ի N 06/3-3/29824--15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և N Մ-888-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մետրոշին վերանորոգում» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02200317) 2015 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված N 42 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համաշինարարական աշխատանքների իրականացում՝ 90,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1126 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 16-ի N 07/80-2/30826-15 և հոկտեմբերի 14-ի N 6/3-3/30437-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ակվատուս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01826626) 2015 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված N 051015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 8,203,455 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1127 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 16-ի N 07/80-2/30716-15 և հոկտեմբերի 14-ի N 06/3-3/30416-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սոնա և Արա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00054623) 2015 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արբես» առողջության կենտրոնի վերակառուցման աշխատանքների (համաձայն նախահաշվի) իրականացում՝ 2,270,770 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱլեՊրոֆիլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02566803) 2015 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների, պատուհանների և այլ տարրերի պատրաստում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1128 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1296-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 16-ի N 07/80-2/30717-15 և հոկտեմբերի 14-ի N 03/3-3/32481-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1296-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-735-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538542) 2014 թվականի հունիսի 23-ին կնքված N AR 230614/2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սննդամթերքի ձեռքբերում՝ 61,382 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մինե» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02549564) 2015 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված N 018/SCI-ARM/GEN/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 531,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1129 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 12-ի N 07/80-2/30120-15 և հոկտեմբերի 9-ի N 06/3-3/29828-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Թումֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00066784) 2015 թվականի հունիսի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային, ռեստորանային սրահի տրամադրման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 277,195 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2015 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի մշակույթի տանը գտնվող Սմարթ սենյակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 5,751,251 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1130 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 7-ի N 07/80-2/29407-15 և հոկտեմբերի 5-ի N 06/3-3/28890-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա և 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Գեղամա ԷՅԾ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08612257) 2015 թվականի հուլիսի 1-ին կնքված N ԱԷ-Լ-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Լիճքի և Վահանի համայնքներում փողոցների արտաքին լուսավորության շինմոնտաժային աշխատանքների իրականացում՝ 11,100,139 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էներգոնագ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03309022) 2015 թվականի հուլիսի 1-ին կնքված N ԱԷ-Լ-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վայոց ձորի մարզի Խնձորուտի և Բարձրունու համայնքներում փողոցների արտաքին լուսավորության շինմոնտաժային աշխատանքների իրականացում՝ 12,858,039 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Գորիսի ԷՅԾ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09203282) 2015 թվականի հուլիսի 1-ին կնքված N ԱԷ-Լ-3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վայոց ձորի մարզի Գնիշիկ և Գոմք համայնքներում փողոցների արտաքին լուսավորության շինմոնտաժային աշխատանքների իրականացում՝ 15,871,495 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Արկադի Վլադիմիր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02206108) 2015 թվականի հուլիսի 9-ին կնքված N 15/04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Լուկաշինի համայնքում ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 2,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Գեղարքունիքի ու Վայոց Ձորի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1131 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N 07/80-2/29065-15 և հոկտեմբերի 5-ի N 06/3-3/28891-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ 00804091) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1302-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Մագնոն » ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2015 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված N Կ/Ա-04/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկական խաղահրապարակի զսպանակաձև սահարանի պատրաստում՝ 414,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1132 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՐՁԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 07/80-2/31398-15 և հոկտեմբերի 19-ի N 06/3-3/31154-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 19-ի N 02/14/12783-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N 03/07-1/12629-15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 21-ի N 01/12.1/5181-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 123,965,710 դրամ ընդհանուր արժեքությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «N 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08404037) 2015 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված N ՀՀ/ՄԴ-1/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 122,765,710 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հուսալի կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09811047) 2015 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված N ՀՀՏՀ-11/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«15» հոկտեմբերի 2015թ.

## «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտա-ուսուցչական կազմի գործունեության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ, ֆիզիկական և իրավաբանական անձիք |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ Խաչարձան գյուղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 123.965.710,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ սեպտեմբերի 30 -ից մինչեւ 2016թ.դեկտեմբերի 30-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ սեպտեմբերի 30 -ից մինչեւ 2016թ.դեկտեմբերի-30-ը մարզադահլիճի կառուցման աշխատանքներ՝ 122.765.710,00 դրամ արժողությամբ<br><br>տեխնիկական հսկողության իրականացում՝ 1.200.000,00 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «N1 Շինվարչություն» ԲԲԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցման աշխատանքների իրականացում՝ 122.765.710,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Ռուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 1.200.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (ստուգումներ, ակտեր և ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1133 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 16-ի N 07/80-2/30981-15 և հոկտեմբերի 15-ի N 06/3-3/30618-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 16-ի N 02/14/12732-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 03/07.1/12525-15 ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի հոկտեմբերի 21-ի N 01/5269-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 9,125,000 դրամ ընդհանուր արժողությամբ « Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Եվրո Կոմֆորտ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01233314) և «Հիմնաքարեր» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01237254) հետ 2015 թվականի հոկտեմբերի 8-ին կնքված N WVA/SIS ADP/CW-15/001/002/FY15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատուհանների տեղադրում՝ 9,125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի («Եվրո Կոմֆորտ» ՍՊԸ՝ 8,486,667 դրամ և «Հիմնաքարեր» ՍՊԸ՝ 638,333 դրամ):

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ ՍԻ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն՝ Միրայր Էդիլյան

«5» հոկտեմբերի 2015թ.

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգում»
Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Աջակցել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցին՝ բարելավելու շենքային պայմանները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության<br>Մեծ Բրիտանիայի գրասենյակ<br>Հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR UK<br>Հեռ.: +44 1908 841000 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ՝ 02528755: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնք<br>Բնագավառը՝ կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 9,125,000 (ինը միլիոն հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցի աշակերտները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 12 հոկտեմբերի 2015թ. - 10 նոյեմբերի 2015թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2015թ. հոկտեմբերի 12-ից մինչև 2015թ. նոյեմբերի 10–ն ընկած ժամանակահատվածում մասնակի վերանորոգման աշխատանքներ իրականացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցում: Մասնավորապես կիրականացվեն հին փայտյա պատուհանների ապամոնտաժման և մետաղապլաստե նոր պատուհանների տեղադրման աշխատանքներ:<br>Այդ աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և շինարարական կապալի պայմանագիր է կնքել «ԵՎՐՈ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի և «Հիմնաքարեր» ՍՊԸ-ի հետ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 9,125,000 (ինը միլիոն հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, որից 8,486,667 (ութ միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ արժեքով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «ԵՎՐՈ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից, իսկ 638,333 (վեց հարյուր երեսունութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «Հիմնաքարեր» ՍՊԸ-ի կողմից: |
| 10 | Ձեռք բերվող (վարձակալվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագրությունը, ծավալները և միավորի գինը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաղատ համայնքի դպրոցի մասնակի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը հայտարարել է բաց մրցույթ, որի արդյունքում հաղթող են ճանաչվել կոնսորցիում պայմանագրի հիման վրա համատեղ հանդես եկող «ԵՎՐՈ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ն և «Հիմնաքարեր» ՍՊԸ-ն: Շինարարական կապալի պայմանագիր է կնքվել «ԵՎՐՈ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի և «Հիմնաքարեր» ՍՊԸ-ի հետ, որոնք պայմանագրում համատեղ հանդիսանում են որպես կապալառու:<br>«Հիմնաքարեր» ՍՊԸ-ն իրականացնելու է հին փայտյա պատուհանների ապամոնտաժման և նոր տեղադրված պատուհանների շեպերի ց/ավազե սվաղման աշխատանքները:<br>«ԵՎՐՈ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ն իրականացնելու է մետաղապլաստե նոր պատուհանների և պլաստմասսե պատուհանագոգերի տեղադրման աշխատանքները:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 9,125,000 (ինը միլիոն հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, որից 8,486,667 (ութ միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ արժեքով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «ԵՎՐՈ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից, իսկ 638,333 (վեց հարյուր երեսունութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «Հիմնաքարեր» ՍՊԸ-ի կողմից: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |

| | | |
|---|---|---|
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի և Շաղատ համայնքի դպրոցի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Ազգային գրասենյակի, Միխանի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Մեծ Բրիտանիայի գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շահեն Մանուկյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1134 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-063-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 19-ի N 07/80-2/31238-15 և հոկտեմբերի 21-ի N 06/3-3/31466-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 30-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-063-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստաված ծրագրի 6-րդ կետերում «236,760,700 դրամ» բառերը փոխարինել «295,410,700 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետում «234,560,700 դրամ» բառերը փոխարինել «293,210,700 դրամ» բառերով.

3) որոշմամբ հաստաված ծրագրի 8-րդ կետում «մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ի կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«N 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08404037) 2015 թվականի հուլիսի 14-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լրացուցիչ աշխատանքների իրականացում՝ 58,650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1135 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 21-ի N 07/80-2/31642-15 և հոկտեմբերի 22-ի N 06/3-3/31685-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և օգոստոսի 28-ի N Մ-888-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 8-րդ կետում «15.06.2015թ. - 30.11.2015թ.» բառերը փոխարինել «15.06.2015թ. - 30.12.2015թ.» բառերով.

2) 9-րդ կետի 2-րդ ենթակետում «739,550,000 դրամ» բառերը փոխարինել «989,550,000 դրամ» բառերով.

3) 9-րդ կետի 3-րդ ենթակետում «692,300,000 դրամ» բառերը փոխարինել «592,300,000 դրամ» բառերով.

4) 9-րդ կետի 4-րդ ենթակետում «215,700,000 դրամ» բառերը փոխարինել «65,700,000 դրամ» բառերով.

5) 10-րդ կետի 3-րդ ենթակետերում «435,600,000 դրամ» բառերը փոխարինել «685,600,000 դրամ» բառերով.

6) 10-րդ կետի 3.4 ենթակետերում «265,000,000 դրամ» բառերը փոխարինել «515,000,000 դրամ» բառերով.

7) 10-րդ կետի 5-րդ ենթակետում «692,300,000 դրամ» բառերը փոխարինել «592,300,000 դրամ» բառերով.

8) 10-րդ կետի 5.1 ենթակետում «692,300,000 դրամ» բառերը փոխարինել «592,300,000 դրամ» բառերով.

9) 10-րդ կետի 6-րդ ենթակետում «215,700,000 դրամ» բառերը փոխարինել «65,700,000 դրամ» բառերով.

10) 10-րդ կետի 6.1 ենթակետում «215,700,000 դրամ» բառերը փոխարինել «65,700,000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00048483) 2015 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված N 43/Մ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հավելվածում նշված ապրանքների մատակարարում՝ 2,178,356 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մետրոշինվերանորոգում» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02200317) 2015 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված N 44 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համաշինարարական աշխատանքների իրականացում՝ 250,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1136 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի հոկտեմբերի 20-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված երկու հատ սառցաստացման մեքենան (5,860 կգ ընդհանուր քաշով, 97,836 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,854,220 դրամ, ՄԾФ մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և N Մ-888-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1137-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/30502-15 և հոկտեմբերի 14-ի N 06/3-3/30440-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱՄ/22.2/11857-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «AmeriCares» հիմնադրամի կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղի (15 տեղ, 44 կգ ընդհանուր քաշով, 1,194 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 181.30 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1138-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 12-ի N 07/80-2/30152-15 և հոկտեմբերի 13-ի N 06/3-3/30176-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի նորակառույց հանրապետական հիվանդանոցի համար ձեռք բերված մաքրող և ախտահանող միջոցների, հատակներ և ապակիներ մաքրող սարքավորումների ու դրանց շահագործման համար անհրաժեշտ պարագաների (156 տեղ, 1,332.6 կգ ընդհանուր քաշով, 494,985.96 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 50,000 ռուբլի, «Գուգարքի» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1139-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 13-ի N 07/80-2/30274-15 և հոկտեմբերի 12-ի N 06/3-3/30050-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պենոտեքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00456619) 2015 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված՝ N Մ15/020 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեկորատիվ քիվերի մատակարարում՝ 1,867,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1140-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 07/80-2/31369-15 և հոկտեմբերի 23-ի N 06/3-3/32093-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հասցեով ուղարկված դյուրակիր համակարգիչների (50 հատ՝ 15 տեղ, 216 կգ ընդհանուր քաշով, 400,000 չինական յուանին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1141-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 07/80-2/31370-15 և հոկտեմբերի 22-ի N 06/3-3/31686-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի նորակառույց հանրապետական հիվանդանոցի համար ձեռք բերված «Lada Largus (KSOY5L)» մակնիշի ավտոմեքենայի (2015 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ XTAKSOY5LF0901622, 616,100 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 40,000 ռուբլի) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված ավտոմեքենայի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1142-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-134-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/31688-15 և հոկտեմբերի 23-ի N 06/3-3/31812-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N ՖԲ/ԱՍՄ-1-2/9275-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բրինձը (880 տեղ, 22,088 կգ ընդհանուր քաշով, 38,580 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 5,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ, բաշխման ցանկը կցվում է) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու, Տավուշի մարզպետներին:

Նախագահ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Բեռի բաշխման ցանկ*

հմվոյս NO. P-185483 12.10.2015

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բրինձ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 376 | 659 |
| | | | Այգուտ | 164 | 832 | 1.459 |
| | | | Մարտունի | 73 | 370 | 650 |
| | | | Ղզրաբակ | 81 | 411 | 721 |
| | | | Վահան | 188 | 954 | 1.673 |
| | | | Կալավան | 23 | 117 | 205 |
| | | | Բարեպատ | 6 | 30 | 53 |
| | | | Չորավանք | 31 | 157 | 276 |
| | | | Անտառամեջ | 22 | 112 | 196 |
| | | | Գավառ | 61 | 310 | 543 |
| | | | Թթուջուր | 81 | 411 | 721 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 259 | 454 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 86 | 151 |
| | | | Արտաշատ | 16 | 81 | 142 |
| | | | Գետազատ | 39 | 198 | 347 |
| | | | Մրգանուշ | 16 | 81 | 142 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 66 | 116 |
| | | | Սևաբերդ | 41 | 208 | 365 |
| | | | Չորաղբյուր | 18 | 91 | 160 |
| | | | Աբովյան | 38 | 193 | 338 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 244 | 427 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 76 | 133 |
| | | | Իջևան | 18 | 91 | 160 |
| | | [illegible] | | 3201 | 16246 | 28.486 |
| | Ընդամենը | | | 4335 | 22000 | 38.580 |

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն [illegible] Ղազարյան

Ա. 13/4.6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1143-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-866-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 07/80-2/31377-15 և հոկտեմբերի 22-ի N 06/3-3/31682-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամի կողմից իրականացվող «ՆՈՒՌ - Նոր ուսումնական ռազմավարություն» ծրագրի մասին» N Մ-866-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը:

2. Սահմանել, որ «Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամի կողմից ձեռք բերված դյուրակիր համակարգիչները, հարակից սարքավորումները և մասերը (5 տեղ, 25 կգ ընդհանուր քաշով, 13,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը և 9 տեղ, 1,824 կգ ընդհանուր քաշով, 242,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումը ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1144-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-038-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/31681-15 և հոկտեմբերի 19-ի N 06/3-3/31155-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2015 թվականի հոկտեմբերի 14-ի գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-038-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «134,744,790 դրամի չափով» բառերը փոխարինել «121,530,120 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1145 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի հոկտեմբերի 23-ին)
**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱԲ-ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԵՐԿՐԻՑ ԺԱՄԱՆԱԾ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N 07/80-2/28836-15 և հոկտեմբերի 1-ի N 06/3-3/28122-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N 02/14/11952-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 18-ի ՖԲ/ԱնՄ-2-1/8226/-15, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 18-ի N 05/16.1/2139-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 19-ի N ԱՄ/22.2/10728-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ուսանողական հանրապետական շտաբ-կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Կորյունի 19 ա, ՀՎՀՀ՝ 01505795) իրականացվող՝ 36,000,000 դրամ արժողությամբ «Հայաստանում աշխատանքի միջազգային կամավորական ճամբարների և արտերկրից ժամանած երկարաժամկետ կամավորների գործունեության կազմակերպում» ծրագիրը (կցվում են):

3. «Հայաստանի ուսանողական հանրապետական շտաբ-կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»



Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Ուսանողական Ջոկատների Հանրապետական

Շտաբ-Կամավորական Աշխատանքների

Ծառայություն [illegible] կողմից

09.սեպտեմբեր.2015թ.

# ԾՐԱԳԻՐ

13/1

Հայաստանում աշխատանքի միջազգային կամավորական ճամբարների և արտերկրից ժամանած երկարաժամկետ կամավորների գործունեության կազմակերպում:

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանում աշխատանքի միջազգային կամավորական ճամբարների կազմակերպում և Հայաստանում արտասահմանից ժամանած երկարաժամկետ կամավորների գործունեության կազմակերպում:<br><br>Հայ և արտասահմանցի կամավորների գործունեության կազմակերպումը Հայաստանում բացվող աշխատանքի միջազգային կամավորական ճամբարներում, որտեղ կամավորները անվարձահատույց կատարում են սոցիալական, երեխաների էսթեթիկական դաստիրակության, շինարարական, էկոլոգիական, վերանորոգման, հիվանդ երեխաների, երեխաների աջակցության հիմնարկների սաների խնամքի և ազատ ժամանցի կազմակերպման աշխատանքներ:<br><br>Կազմակերպել երկարաժամկետ (6 ամսից մինչև 1 տարի) կամավորների կամավորական աշխատանքը և կացությունը Հայաստանում:<br><br>Հոգ տանել ծնողազուրկ, հաշմանդամ և սակավ հնարավորություններ , տեսողական, խոսքի և լսողական խանգարումներ, լեյկեմիա, մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների նկատմամբ:<br><br>Իրականացնել պատմամշակութային ժառանգության կոթողների և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ: Երիտասարդներին հնարավորություն ընձեռել և խթանել անվճար, հանրօգուտ աշխատանքներ կատարելու: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |



13/1

| | | |
|---|---|---|
| 3. | Բարեգործը | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն,<br>Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամ,<br>"Գլոբալ Էյդ Նեթվորք (ԳԷՅՆ),<br>"Սիմոնյան" կրթական բարեգործական հիմնադրամ: |
| 4. | Ծրագրի կատարողը | Ուսանողական Ջոկատների Հանրապետական Շտաբ-Կամավորական Աշխատանքների Ծառայություն հասարակական կազմակերպություն,<br>Կորյուն 19Ա, Երևան, Հ ՎՀՀ 01505795 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն – Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոնում, Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնում, Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N14 հատուկ դպրոցում, «Մուրացան» հիվանդանոցային համալիրում, Աբովյանի և Իջևանի SOS Մանկական գյուղերում, Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնում, Երևանի Բուսաբանական այգում, Գեղարդավանքում և «Զվարթնոց» արգելոց-թանգարանում, Լեհերի համագործակցության «Պոլոնիա» ՀԿ-ում և մանկական բուժ. հիմնարկություններում, մանկատներում, հատուկ դպրոցներում՝ ըստ ներկայացված լրացուցիչ հայտերի, կամավորների գործունեության կազմակերպում:<br><br>Վերը նշված ծրագրերի բնագավառներն են՝ սոցիալական, բժշկական, կրոնական, էկոլոգիական, կրթական, մշակութային, ազգային փոքրամասնությունների աջակցության: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ընդամենը 36 000 000 դրամ, որից<br><br>2016թ. –6 300 000 դրամ,<br>2017թ. –6 300 000 դրամ,<br>2018թ. –6 400 000 դրամ,<br>2019թ. –6 450 000 դրամ,<br>2020թ. –6 550 000 դրամ<br><br>Օգտագործված ավտոմեքենայի ձեռքբերման ծախս – 4 000 000 դրամ:<br><br>Ստացման ժամկետները մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 15ը: |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի, Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N14 հատուկ դպրոցի, «Մուրացան» հիվանդանոցային համալիրի, Աբովյանի և Իջևանի SOS Մանկական գյուղերի, Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնի 500-550 ծնողազուրկ, սակավ հնարավորություններ և հաշմանդամություն, տեսողական, խոսքի և լսողական խանգարումներ, լեյկեմիա, մանկական ուղեղային կաթված և այլ հիվանդություններ ունեցող երեխաները:<br>Երևանի Բուսաբանական այգու այցելուները և Երևան քաղաքի բնակչությունը, քանի որ Բուսաբանական այգին ապահովում է ամբողջ քաղաքի օդի մաքրությունը:<br>Գեղարդավանքում և «Զվարթնոց» արգելոց-թանգարանի այցելուները և աշխատակազմը :<br>Լեհերի համագործակցության «Պոլոնիա» ՀԿ-ի ծրագրի շրջանակներում կատարվելիք աշխատանքները ուղղված են Հայաստանում բնակվող լեհերին և լեհախոս բնակչությունը, որի նպատակն է պահել ազգային ինքնուրույնությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Վերը նշված վայրերում 2016-2020թթ. հուլիսի 1ից օգոստոսի 30ը միջազգային կամավորական ճամբարների գործունեության կազմակերպում, իսկ երկարաժամկետ կամավորների դեպքում՝ (6 ամսից մինչև 12 ամիս) անհատ կամավորների կողմից ծրագրերի իրականացում:<br><br>Հայ կամավորները արտասահմանցի կամավորների հետ վերը նշված վայրերում կատարելու են հետևյալ աշխատանքները՝ երեխաների համար օտար լեզուների, նկարչության, պարի, երգի, թատերական խմբակների կազմակերպում, երեխաների աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպում, հայ և արտասահմանից ժամանած կամավորների և երեխաների ջանքերով թատերական բեմադրությունների և համերգների կազմակերպում, հիվանդասենյակների, խաղասենյակների, ննջասենյակների, դահլիճների, խաղահրապարակների, դասարանների, ինչպես նաև այլ տարածքների վերանորոգում, բարեկարգում: Բուսաբանական այգու տարածքի բարեկարգման, չոր և ծեր ծառերի կտրման, նոր արահետների բացման, բույսերի խնամքի աշխատանքների իրականացում: «Զվարթնոց» արգելոց-թանգարանի և Գեղարդավանքի տարածքների բարեկարգում և պահպանում: Պատմամշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ աշխատանքներ, գերաճած |



| | | |
|---|---|---|
| | | խոտերի և մոլախոտերի, ծառուղիների մաքրում, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ:<br><br>1. Յուրաքանչյուր տարի 7 ճամբարների կազմակերպման համար ֆինանսական միջոցների ծավալը կկազմի մոտ 3 800 000 դրամ,որից<br>• յուրաքանչյուր տարի ճամբարների համար ձեռք բերվող ապրանքատեսակներ, ծառայություններ՝ սննդամթերք 2 000 000<br>• էքսկուրսիաներ 800 000<br>• խաղեր և խաղալիքներ, գրենական պիտույքներ և դեղորայք ճամբարների համար 400 000<br>• աշխատանքային գործիքներ, շինարարական նյութեր և տնտեսական ապրանքներ 600 000 դրամ<br>2. Միջազգային ISIC քարտերի , ցուցանակների, պաստառների, շապիկների ձեռքբերում 300 000դրամ:<br>3. Երկարաժամկետ կամավորների համար օթևան տրամադրելու վճարներ տարեկան 1 500 000 դրամ:<br>4. Կազմակերպական ծախսերը 5 տարիների համար կկազմեն 4 000 000 դրամ:<br>5. Օգտագործված ավտոմեքենայի ձեռքբերման ծախս՝ շուրջ 4 000 000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Կազմակերպական ծախս են հանդիսանում շտաբի գրասենյակի կոմունալ ծախսերը՝ ջուր, հոսանք, ինտերնետ, գրենական պիտույքներ, տպագրական ծախսեր և այլն:<br>Վերը նշված ծախսերը 5 տարիների համար կկազմեն 4 000 000 դրամ:<br><br>2. Օգտագործված ավտոմեքենայի ձեռքբերման ծախս՝ շուրջ 4 000 000 դրամ, քանի որ մեքենան ծառայում է Երևանում և Հայաստանի շրջաններում որպես ծրագրերի գործունեությունը վերահսկելու և պրակտիկ օգնություն ցուցաբերելու միջոց, այդ թվում արտասահմանից ժամանած կամավորներին դիմավորելու, արտակարգ իրավիճակներում (հիվանդություններ, տրավմաներ) բժշկական հիմնարկություններ տեղափոխելու, բազմաթիվ տնտեսական գնումներ կատարելու, և ճամբարների համար սնունդ ու այլ անհրաժեշտ պարագաներ տեղափոխելու միջոց:<br><br>3. Երկարաժամկետ կամավորների համար օթևան տրամադրելու վճարներ տարեկան 1 500 000 դրամ:<br><br>4. Ճամբարների կազմակերպման համար պահանջվող տարեկան ընդհանուր ծախսեր՝ 3 800 000 դրամ: |

13/1

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | • Կոմունալ ծախսեր՝ 2016թ. – 450 000 դրամ, 2017թ. – 450 000 դրամ, 2018թ. – 500 000 դրամ, 2019թ. – 550 000 դրամ, 2020թ. –550 000 դրամ<br>• Գրասենյակային ծախսեր՝ 2016թ. – 250 000 դրամ, 2017թ. – 250 000 դրամ, 2018թ. – 300 000 դրամ, 2019թ. – 300 000 դրամ, 2020թ. –4000 00 դրամ ։<br>Ընդամենը 4 000 000 դրամ։ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Արտաքին գործերի, Առողջապահության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Մշակույթի , Սպորտի և երիտասարդության հարցերի, Կրթության և գիտության նախարարությունների հետ։ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ճամբարների մշտական այցելություն, ծրագրի մասնակիցների հետ զրույցներ, միջոցառումներին և կազմակերպչական բոլոր հարցերի լուծմանը մասնակցություն, հաշվետվությունների ընդունում և գնահատում, մասնակիցների կողմից լրացված գնահատման հարցաթերթիկների, ճամբարներ հյուրընկալող կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տրված բնութագրերի վերլուծություն ։<br>3-րդ կետում նշված բարեգործական կազմակերպություններին տրվում են կատարված աշխատանքի և ֆինանսական ընթացիկ և տարեկան հաշվետվություններ։ |

01505795

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1146 - Ա**
**քաղ. Երևան**

### «ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/30503-15 և հոկտեմբերի 13-ի N 06/3-3/30292-15, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 13-ի N 02/16.1/2322-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով սիրիական պատերազմի հետևանքով Հայաստանում ապաստան գտած սիրիահայերի ընտանիքներին անհատույց բաշխելու նպատակով «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական պարագաների (11,339.8 կգ ընդհանուր քաշով, 445,392 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1147 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 13-ի N 07/80-2/30273-15 և հոկտեմբերի 12-ի N 06/3-4/30049-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-615-Ա (2015 թվականի հոկտեմբերի 2-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդգար Փարթներս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00104451) 2015 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է զեկույցի, ուղեցույցի և ձեռնարկի տպագրում՝ 2,161,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1148 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-ի N Մ-300-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 7-ի N 07/80-2/29477-15 և հոկտեմբերի 5-ի N 06/3-3/28892-15 եզրակացությունները և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի սեպտեմբերի 30-ի N 737 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի արտաքին լուսավորության աշխատանքներ» ծրագրի մասին» N Մ-300-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «15,743,091 դրամ» բառերը փոխարինել «23,953,460 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «01 հուլիսի 2015թ.» բառերը փոխարինել «10 դեկտեմբերի 2015 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1149 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՕՅՈՒՆՋՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՅՈՒՆՋՅԱՆ» ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 07/80-2/31410-15 և հոկտեմբերի 19-ի N 06/3-3/31157-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 19-ի N 02/14/12782-15, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N 06/18.1/6043-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 21-ի N 03/07-1/15586-15 և Շիրակի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 19-ի N 01/5376-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ Շիրակի մարզի, քաղ.Գյումրի, Մհեր Մկրտչյան 47, ՀՎՀՀ 05538995) իրականացվող՝ 451,200,000 դրամ արժողությամբ «Օյունջյան» արհեստների կենտրոնի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2013 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված՝ N ՕՐՀ-051015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 451,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Օյունջյան» բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել



տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Գյումրիի քաղաքապետին և Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Օյունջյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Գագիկ Լամիկյանի կողմից

« 15 » հոկտեմբերի 2015 թ.

## ««Օյունջյան» արհեստների կենտրոնի կառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կառուցել Գյումրի քաղաքում 200 աշակերտների համար արհեստների կենտրոն: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | Ամերիկահայ բարերար Ջոն Օհաննես Օյունջյան: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Օյունջյան» բարեգործական հիմնադրամ, ք. Գյումրի, Միեր Մկրտչյան 47, ՀՎՀՀ՝ 05538995: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Միեր Մկրտչյան 47/4, Բնագավառը՝ կրթական-մշակութային: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 451,200,000 (չորս հարյուր հիսունմեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի շուրջ 200 երեխաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 05.10.2015թ. – 05.05.2017թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել Գյումրի քաղաքի Միեր Մկրտչյան 47/4 հասցեում «Օյունջյան» արհեստների կենտրոնը: Կենտրոնի կառուցման գինն է 451,200,000 ՀՀ դրամ: Շինարարության ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 451,200,000 ՀՀ դրամ:<br>Շինարարությունը նախատեսվորմ է իրականացնել երեք փուլերով՝<br>Առաջին փուլ 05.10.2015թ. – 15.04.2016թ.:<br>Առաջին փուլում նախատեսվում է քանդման աշխատանքներ՝ 2,926,824 դրամ, հողային աշխատանքներ՝ 10,742,930 դրամ, հիմքեր՝ 44,703,680 դրամ, պատեր և հիմնակմախք՝ 94,706,880 դրամ, ծածկեր՝ 47,113,474, տանիք՝ 24,451,802:<br>Ընդամենը՝ 224,645,590 դրամ:<br>Երկրորդ փուլ՝16.04.2016թ. – 15.11.2016թ.: |



| | | |
|---|---|---|
| | | Երկրորդ փուլով նախատեսվում են միջնորմներ՝ 16,629,553 դրամ, անցումի կոնստուկտիվ տարրեր՝ 12,754,286, դռներ՝ 6,215,796 դրամ, պատուհաններ՝ 15,781,543 դրամ, ներքին և արտաքին աստիճաններ՝ 14,386,443 դրամ, ներքին հարդարում՝ 22,602,453 դրամ, ջեռուցում՝ 14,445,904 դրամ, օդափոխություն՝ 1,718,936 դրամ, տաք և սառը ջրամատակարարում՝ 4,717,790 դրամ, կենցաղային կողուղու ներքին ցանց՝ 5,675,240 դրամ, էլ. ուժային սարքավորումներ՝ 2,047,830, ներքին էլ. լուսավորություն՝ 13,427,370 դրամ:<br>Ընդամենը՝ 130,403,144 դրամ:<br>Երրորդ փուլ՝ 16.11.2016թ. – 05.05.2017թ.:<br>Երրորդ փուլով նախատեսվում են հատակների՝ 42,804,805 դրամ, վիտրաժների՝ 9,178,890 դրամ, դարպասներ, ցանկապատ՝ 2,567,188 դրամ, արտաքին հարդարում՝ 1,734,370, այլ աշխատանքներ՝ 10,041,952 դրամ, ջրամատակարարման արտաքին ցանց՝ 1,221,024, կոյուղու արտաքին ցանց՝ 3,806,900 դրամ, գազատարի ներքին ցանց՝ 459,410 դրամ, գազատարի արտաքին ցանց՝ 1,829,370, հողանցման համակարգ՝ 221,700 դրամ, հակահրդեհային պաշտպանություն՝ 2,855,992 դրամ:<br>Ընդամենը 76,721,601 դրամ:<br>Չկանխատեսված աշխատանքներ և ծախսեր 4.5%՝ 19,429,666 դրամ:<br>Ընդհանուրը 451,200,000 դրամ:<br>Շինարարությունը նախատեսվում է ավարտել 05.05.2017թ.: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 451,200,000 դրամի չափով՝ պայմանագիր No ՕԲՀ-051015 կնքված 05.10.2015 թ. «Կանակա» ԲԲԸ-ի, (ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Նժդեհի 4, ՀՎՀՀ՝ 06901369) և «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի (ՀՀ, ք. Գյումրի, Միեր Մկրտչյան 47, ՀՎՀՀ՝ 05538995) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Շիրակի մարզպետարան, Գյումրիի քաղաքապետարան և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվում է «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1150 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 07/80-2/31376-15 և հոկտեմբերի 19-ի N 06/3-3/31156-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված լուսատուների (մեկ տեղ, 300 կգ ընդհանուր քաշով, 32,866 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Գարեգին Ա կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1151 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-986-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 07/80-2/31368-15 և N 06/3-3/31457-15 եզրակացությունները, հաշվի առնելով «Մայրի» հասարակական կազմակերպության 2015 թվականի հոկտեմբերի 14-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող մարդկանց միջազգային համաժողովի կազմակերպում» ծրագրի մասին» N Մ-986-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի «3,467,000 դրամ արժողությամբ» բառերը փոխարինել «715,100 դրամ արժողությամբ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02594556) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էրեբունի-Պլազա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02580003) 2015 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կոնֆերանս դահլիճների տրամադրում 140,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «[illegible]» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00871214) 2015 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրասիրության կազմակերպում 575,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշման պատճենը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Նախագահ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Սոցիալական ինտեգրման կենտրոն "Մայրի" հասարակական կազմակերպության
տնօրեն Զարուհի Մանուկյանի կողմից
«14» հոկտեմբերի 2015թ.

### Հ ա շ մ ա ն դ ա մ ու թ յ ու ն ու ն ե ց ո ղ մ ա ր դ կ ա ն ց մ ի ջ ա զ գ ա յ ի ն հ ա մ ա ժ ո ղ ո վ ի կ ա զ մ ա կ ե ր պ ու մ

### Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց Միջազգային Համաժողովի կազմակերպումը<br>Ծրագիրը ուղղված է՝ հատուկ կարիքներով երիտասարդների ինտեգրմանը հասարակության մեջ: Նախատեսում ենք եռօրյա հանդիպումներ Հայաստանի և արտերկրներից , նույն թվում Ռուսաստանից, Վրաստանից, Ֆրանսիայից, Հոլանդիայից ժամանած հյուրերի միջև: Առաջին օրը տեղի կունենա մշակութային համերգային ծրագիր, կանցկացվեն աշխատանքային խմբեր ՝ հայկական պարի, հոգևոր և աշխարհիկ հայկական երաժշտության, թատրոնի, հայկական խոհանոցի, ձեռքի աշխատանքի, որոնց արդյունքը կներկայացվի վերջին օրը: Բացի այդ, երկրորդ օրը կանցկացվի կլոր սեղան ոլորտի խնդիրների բացահայտման, լուսաբանման նպատակով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից (այսուհետ՝ հարկային արտոնություններ) |
| 3. | Բարեգործը | 1. Ֆրանս - Հայկական Զարգացման Հիմնադրամ<br>2. «Հոֆբերգլի» հիմնադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | 1. Սահմանափակ հնարավորություններով երեխաների և պատանիների սոցիալական ինտեգրման կենտրոն «Մայրի» ՀԿ, Երևան, Եղբայրության 11, Շենգավիթ վարչական շրջան, ՀՎՀՀ 02594556: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Երևան, Բնագավառը՝ սոցիալական, մշակութային |
| 6. | Ծրագրի բյուջեն | 715 100 դրամ (յոթ հարյուր տասնհինգ հազար հարյուր) ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Տասնվեց տարեկանից մեծ հաշմանդամություն ունեցող անձինք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 30 օր (2015թ. հոկտեմբերի 1-ից – 30-ը ) |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Դահլիճի վարձակալության գումար 140,000 ( հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ<br>2. Սննդի ապահովման ծախսեր 575100 (հինգ հարյուր յոթանասունհինգ հազար հարյուր) ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1.Դահլիճի վարձակալության ծախսերը երեք օրվա համար, նախատեսվող գինը՝ 140,000 ( հարյուր քառասուն հազար)<br>2. Սննդի ապահովման ծախսեր՝ 575 100 (հինգ հարյուր յոթանասունհինգ հազար հարյուր) ՀՀ դրամ, մեկ հոգու ծախսը երեք օրվա համար մոտ 5751 (հինգ հազար յոթ հարյուր հիսունմեկ ) ՀՀ դրամ հաշվարկից: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Մայրի» ՀԿ, հոգաբարձուների Խորհուրդ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1152 -Ա
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-ի N Մ-189-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/31766-15 և N 06/3-3/31742-15 եզրակացությունները և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի N 789 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «էջմիածնապատկան վանքերի տնտեսական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N Մ-189-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-769-Ա որոշման խմբագրությամբ) որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «61,200,000 դրամ» բառերը փոխարինել «63,200,000 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի երկրորդ պարբերությունում «2,300,000 դրամ» բառերը փոխարինել «4,300,000 դրամ» և «ընդամենը 3,800,000 դրամ» բառերը փոխարինել «ընդամենը 6,600,000 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1153- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբու-ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N 07/80-2/28655-15 ու հոկտեմբերի 5-ի N 06/3-3/28888-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 30-ի N ԱՄ/22.2/11291-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը (վիրահատական պարագաներ՝ 1 տեղ, 1.10 կգ, 1,226 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1154- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N Մ-804-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 100/15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 07/80-2/29710-15 և հոկտեմբերի 8-ի N 06/3-3/29547 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N ԱՄ/22.2/11494-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Էպիլեպսիայով հիվանդ երեխաներին դեղորայքի անվճար բաշխում» բարեգործական ծրագրի մասին» N Մ-804-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «12,165,500» թիվը փոխարինել «4,545,000» թվով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01536316) 2015 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N 05/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի ձեռքբերում՝ 1,361,250 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

13/513

ՅԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հովարդ Կարագյոզյան» Բժշկական Բարեգործական Հասարակական Կազմակերպություն

Գլխավոր Գործադիր Տնօրենի Ժամանակավոր Պաշտոնակատար ......................Ալիսա Բաղալյանի կողմից

«01» հոկտեմբերի 2015թ.

**«ՅՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2015թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԷՊԻԼԵՊՍԻԱՅՈՎ ՀԻՎԱՆԴ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԱՆՎՃԱՐ ԲԱՇԽՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է էպիլեպսիայով հիվանդ երեխաների մշտական դեղորայքով ապահովումը՝ բուժման արդյունքները բարելավելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Յովարդ Կարագյոզյան Յիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Յովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն՝ իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նորքի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՅՎՅՅ-01533153, «Արաբկիր» ԲՅ-ԵԴԱԻ կազմում գործող «Յանրապետական Մանկական էպիլեպտոլոգիական կենտրոն» մասնագիտացված դիսպանսեր ծառայություն: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ՅՅ բոլոր մարզերում, Երևան քաղաքում և ԼՂՅ-ում: Յիմնական հետազոտությունները, բժշկական հսկողությունը և դեղորայքի բաշխումը կատարվելու է «Արաբկիր» ԲՅ-ԵԴԱԻ կազմում գործող «Յանրապետական Մանկական էպիլեպտոլոգիական կենտրոն» մասնագիտացված դիսպանսեր ծառայության մասնագետների կողմից:<br>Ծրագրի բնագավառը - առողջապահական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան Հիշատակի ընկերակցության կողմից <<Հովարդ Կարագյոզյան>> ԲԲՀԿ-ի հետ 22.12.2014թ. կնքված դրամաշնորհային պայմանագրին համաձայն: 2015թ ծրագրի բյուջեն կազմում է **4,545,000.00** ՀՀ դրամ: |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են Երևան քաղաքի, ՀՀ բոլոր մարզերի և ԼՂՀ-ի էպիլեպսիայով հիվանդ՝ կենտրոնում հաշվառված և 2015թ. ընթացքում նոր հայտնաբերվող, 0-18 տարեկան երեխաները: | |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2015թ. հուլիսի 15-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: | |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ. ծրագրով նախատեսվում է «Հանրապետական Մանկական էպիլեպտոլոգիական կենտրոն» մասնագիտացված դիսպանսեր ծառայությունում հաշվառված 250 0-18 տարեկան հիվանդների ընթացիկ հսկողություն և բուժում (անվճար մշտական դեղորայքի բաշխում) 2015թ. հուլիսի 15-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը: Դեղորայքի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կազմում է ***4,545,000.00*** ՀՀ դրամ: | |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Արփիմեդ» ՍՊԸ-ի հետ 23.06.2015թ. կնքված Կլոնազեպամ 2 մգ - 3,600 հաբ (150 տուփ, 1 տուփը 24 հաբ) և Ֆենոբարբիտալ 100 մգ - 19,200 հաբ (400 տուփ, 1 տուփը 48 հաբ) դեղորայքի մատակարարման № 03/2015 պայմանագիր | 292,500 դր. |
| | | «Ռիխտեր-Լամբրոն» ՍՊԸ - ի հետ 23.06.2015թ. կնքված Դեպակին Քրոնո 300 մգ - 30,000 հաբ (300 տուփ, 1 տուփը 100 հաբ) դեղորայքի մատակարարման № 04/2015 պայմանագիր | 2,891,250 դր. |
| | | <<ՎԱԳԱ-ՖԱՐՄ>> ՍՊԸ-ի հետ 01.10.2015թ. կնքված Լամալ 100 մգ - 3,000 հաբ (100 տուփ, 1 տուփը 30 հաբ) և Լետիրամ 500 մգ - 3,000 հաբ (50 տուփ, 1 տուփը 60 հաբ) դեղորայքի մատակարարման № 05/2015 պայմանագիր | 1,361,250 դր. |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չկան: | |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ՀՀ բոլոր մարզերի մարզպետարանների առողջապահության վարչություններ, «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ կազմում գործող «Հանրապետական Մանկական էպիլեպտոլոգիական կենտրոն»: | |



| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ՀՀ բոլոր մարզերի մարզպետարանների առողջապահության վարչություններ, «[illegible]» Հիշատակի Ընկերակցություն, «Արաբկիր» բժշկական համալիր [illegible], ամենամյա աուդիտ, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1155- Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N Մ-1338-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության 2015 թվականի սեպտեմբերի 30-ի N H-05/15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 7-ի N 07/80-2/29544-15 ու հոկտեմբերի 2-ի N 06/3-3/28652-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-1338-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի 11-րդ ենթակետում «2,700,000» թիվը փոխարինել «2,180,000» թվով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 15-րդ ենթակետում «2,700,000» թիվը փոխարինել «2,180,000» թվով.

3) որոշմամբ հաստատված ծրագրի 11-րդ կետի 7-րդ ենթակետում «գրասենյակային ծախսեր՝ 800,000 դրամ» բառերը փոխարինել «գրասենյակային ծախսեր՝ 1,320,000 դրամ» բառերով.

4) որոշմամբ հաստատված ծրագրի 11-րդ կետի 10-րդ ենթակետում «բենզինի ծախսեր՝ 2,700,000 դրամ» բառերը փոխարինել «բենզինի ծախսեր՝ 2,180,000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02552842) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն



անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2015 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված՝ N 1TM/ORRAN 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Օրրան» ԲՀԿ-ի երևանյան կենտրոնում տեսահսկման, սելեկտիվ անցումային համակարգերի սարքավորումների տեղադրման, կարգավորման և շահագործման հանձնման աշխատանքների իրականացում՝ 925,940 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1156-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-940-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N 495 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 12-ի N 07/80-2/30121-15 և հոկտեմբերի 12-ի N 06/3-3/30067-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N ԱՄ/22.2/11646-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) N Մ-940-Ա որոշման 1-ին կետում (254.66 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) բառերը փոխարինել (93.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 230.30 «Արարատյան» ՏՄ) բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

13/6.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1157-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 29-ի N ԱՄ/15/11193-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 6-ի N 07/80-2/29287-15 ու հոկտեմբերի 2-ի N 06/3-3/28652 15 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու [illegible]:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
առողջապահության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Ա. Կարապետյանի կողմից
«8» 10 2015թ.

**«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»**

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածվածությունը Հայաստանի Հանրապետությունում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» համաձայն օգտվել ԱԱՀ-ի և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի , տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամ 1214 Վերներ, Ժնև, Շվեցարիա |
| 4. | Ծրագրի կատարողը | ՀՀ առողջապահության նախարարության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խումբ: Կառավարական տուն 3, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն ՀՎՀՀ 02507171 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսվում է կազմակերպել միջոցառումներ ք. Երևանում և ՀՀ մարզերում: Ծրագրի հիմնական բնագավառը Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգն է: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3 893 375 (երեք միլիոն ութ հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր յոթանասունհինգ) եվրոյին համարժեք ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության խոցելի խմբերը, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժմամբ և կանխարգելմամբ զբաղվող բժշկական հաստատությունները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը: |

| | | | |
|---|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցները | Սույն ծրագիրը հանդիսնում է 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 2-րդ փուլը: Համաձայն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի և ՀՀ առողջապահության նախարարության միջև կնքված պայմանագրի նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ | |
| | | **Նպատակ 1** | ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում և բնակչության առավել խոցելի խմբերի շրջանում ցածր տարածվածության պահպանում: |
| | | Նկարագրությունը | Նշված նպատակի իրականացումը ենթադրում է՝<br>• ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտման կետերին և լաբորատորիաներին շարժական խմբի միջոցով տեխնիկական օգնության տրամադրում և մոնիթորինգային այցերի իրականացում,<br>• ՄԻԱՎ-ի ախտորոշման համար ծախսանյութերի և ՄԻԱՎ-ի թեստ-հավաքածուների ձեռքբերում (Գլոբալ հիմնադրամի կողմից՝ ուղղակի գնման մեխանիզմով),<br>• ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման նպատակով դատապարտյալների շրջանում անվտանգ վարքագծի ձևավորում և մեթադոնային փոխարինող բուժման տրամադրում,<br>• ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և վնասի նվազեցման նպատակով մեթադոնային փոխարինող բուժման իրականացում ներարկային թմրամիջոց գործածողների շրջանում,<br>• Մեթադոնային փոխարինող բուժման համար դեղերի (Մեթադոնի) գնում: |
| | | 2013թ. Եռամսյակ I | 222 450 եվրո |
| | | 2013թ. Եռամսյակ II | 40 591 եվրո |
| | | 2013թ. Եռամսյակ III | 125 886 եվրո |
| | | 2013թ. Եռամսյակ IV | 145 077 եվրո |
| | | **Ընդհանուր 1 տարի** | **534 004 եվրո** |
| | | 2014թ. Եռամսյակ I | 79 389 եվրո |
| | | 2014թ. Եռամսյակ II | 79 424 եվրո |
| | | 2014թ.Եռամսյակ III | 79 389 եվրո |
| | | 2014թ. Եռամսյակ IV | 119 384 եվրո |
| | | **Ընդհանուր 2 տարի** | **357 586 եվրո** |
| | | 2015թ. Եռամսյակ I | 53 135 եվրո |
| | | 2015թ. Եռամսյակ II | 40 555 եվրո |
| | | 2015թ.Եռամսյակ III | 40 555 եվրո |
| | | 2015թ.Եռամսյակ IV | 167 045 եվրո |
| | | **Ընդհանուր 3 տարի** | **301 290 եվրո** |

13/6.3

| | | | |
|---|---|---|---|
| | | **Ընդամենը 1, 2, 3 տարիներ** | **1 192 880 եվրո** |
| | | **Նպատակ 2** | ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խնամքի, աջակցության և բուժման բարելավում: |
| | | Նկարագրությունը | Նշված նպատակի իրականացումը ենթադրում է՝<br>• Հակառետրովիրուսային և ուղեկից (օպորտունիստական) վարակների բուժման իրականացում,<br>• Հակառետրովիրուսային դեղերի գնում Գլոբալ հիմնադրամի կողմից՝ ուղղակի գնման մեխանիզմով,<br>• Ուղեկից վարակների բուժման համար դեղերի գնում,<br>• Լաբորատոր ծախսանյութերի և բժշկական նշանակության պարագաների ձեռքբերում: |
| | | 2013թ. Եռամսյակ I | 541.714 եվրո |
| | | 2013թ. Եռամսյակ II | 0 |
| | | 2013թ. Եռամսյակ III | 0 |
| | | 2013թ. Եռամսյակ IV | 597 115 եվրո |
| | | **Ընդհանուր 1 տարի** | **1 138 829 եվրո** |
| | | 2014թ. Եռամսյակ I | 0 |
| | | 2014թ. Եռամսյակ II | 0 |
| | | 2014թ.Եռամսյակ III | 0 |
| | | 2014թ. Եռամսյակ IV | 691497 եվրո |
| | | **Ընդհանուր 2 տարի** | **691 497 եվրո** |
| | | 2015թ. Եռամսյակ I | 0 |
| | | 2015թ. Եռամսյակ II | 0 |
| | | 2015թ.Եռամսյակ III | 0 |
| | | 2015թ.Եռամսյակ IV | 6151 եվրո |
| | | **Ընդհանուր 3 տարի** | **6151 եվրո** |
| | | **Ընդամենը 1, 2, 3 տարիներ** | **1836477 եվրո** |
| | | **Նպատակ 3** | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին բազմոլորտային հակազդման ռազմավարության շարունակական զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծում: |
| | | Նկարագրությունը | Նշված նպատակի իրականացումը ենթադրում է՝<br>• ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ դասընթացների կազմակերպում և անցկացում պետական/ոչ պետական կառույցների մասնագետների համար,<br>• Լաբորատոր մասնագետների համար դասընթացների կազմակերպում և անցկացում,<br>• Առողջապահական ոլորտի մասնագետների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ դասընթացների կազմակերպում և անցկացում, |

13/6.3

<table>
<tr><td></td><td></td><td></td><td>• ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին վերաբերվող գործողությունների և ծառայությունների մոնիթորինգ և գնահատում, համաճարակաբանական հետազոտությունների իրականացում, մոնիթորինգի և գնահատման համակարգի հզորացում:</td></tr>
<tr><td></td><td></td><td>2013թ. Եռամսյակ I</td><td>333 293 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>2013թ. Եռամսյակ II</td><td>19 170 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>2013թ. Եռամսյակ III</td><td>19 170 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>2013թ. Եռամսյակ IV</td><td>16880 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>Ընդհանուր 1 տարի</td><td>388513 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>2014թ. Եռամսյակ I</td><td>75675 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>2014թ. Եռամսյակ II</td><td>19 170 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>2014թ.Եռամսյակ III</td><td>19 170 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>2014թ. Եռամսյակ IV</td><td>22 665 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>Ընդհանուր 2 տարի</td><td>136 680 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>2015թ. Եռամսյակ I</td><td>12665 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>2015թ. Եռամսյակ II</td><td>5408 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>2015թ.Եռամսյակ III</td><td>8336 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>Ընդհանուր 3 տարի</td><td>26409 եվրո</td></tr>
<tr><td></td><td></td><td>Ընդամենը 1, 2, 3 տարիներ</td><td>551602 եվրո</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td colspan="2">Ծրագրի իրականացման 3 տարիների ընթացքում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) հետևյալ ապրանքներն ու ծառայությունները՝<br>1. Հակառետրովիրուսային և ուղեկից (օպորտունիստական) վարակների բուժման համար դեղեր (ներառյալ տեղափոխման ծախսերը).<br>I տարի – 436 278 եվրոյին համարժեք դրամ<br>II տարի – 257 324 եվրոյին համարժեք դրամ<br>III տարի – 625 եվրոյին համարժեք դրամ<br>Ընդամենը – 694 227 եվրոյին համարժեք դրամ:<br>2. Մեթադոնային փոխարինող բուժման համար դեղեր (Մեթադոն).<br>I տարի – 199 344 եվրոյին համարժեք դրամ<br>II տարի – 138 579 եվրոյին համարժեք դրամ<br>III տարի – 117 633 եվրոյին համարժեք դրամ<br>Ընդամենը – 455 556 եվրոյին համարժեք դրամ:</td></tr>
</table>

13/6.3

<table>
<tr><td></td><td></td><td>3. Ախտորոշիչ թեստ հավաքածուներ, լաբորատոր ծախսանյութեր, բժշկական սարքավորումներ.<br>I տարի – 1 051 127 եվրոյին համարժեք դրամ<br>II տարի – 248 732 եվրոյին համարժեք դրամ<br>III տարի – 254 883 եվրոյին համարժեք դրամ<br>Ընդամենը – 1 554 742 եվրոյին համարժեք դրամ:<br>4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խորհրդատվության և լաբորատոր հետազոտման կետերին շարժական խմբի միջոցով իրականացվող տեխնիկական օժանդակության և մոնիթորինգի միջոցառումներ.<br>I տարի – 74 631 եվրոյին համարժեք դրամ<br>II տարի – 54 459 եվրոյին համարժեք դրամ<br>III տարի – 41 441 եվրոյին համարժեք դրամ<br>Ընդամենը – 170 531 եվրոյին համարժեք դրամ:<br>5. Քրեակատարողական հիմնարկներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելիչ միջոցառումների՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտման, ներարկային թմրամիջոցներ գործածողների շրջանում վնասի նվազեցման ծրագրի և մեթադոնային փոխարինող բուժման իրականացում.<br>I տարի – 34 640 եվրոյին համարժեք դրամ<br>II տարի – 27 712 եվրոյին համարժեք դրամ<br>III տարի – 21 168 եվրոյին համարժեք դրամ<br>Ընդամենը – 83 520 եվրոյին համարժեք դրամ:<br>6. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բուժաշխատողների, լաբորատոր բժշկների, պետական/ոչ պետական կառույցների աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում.<br>I տարի – 37 686 եվրոյին համարժեք դրամ<br>II տարի – 25 311 եվրոյին համարժեք դրամ<br>III տարի – 13 093 եվրոյին համարժեք դրամ<br>Ընդամենը – 76 090 եվրոյին համարժեք դրամ:<br>7. Տեխնիկական աջակցության և խորհրդատվության տրամադրում.<br>I տարի – 796 եվրոյին համարժեք դրամ<br>II տարի - 0 եվրոյին համարժեք դրամ<br>III տարի – 0 եվրոյին համարժեք դրամ<br>Ընդամենը – 796 եվրոյին համարժեք դրամ:<br>8. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային համաճարակաբանական և գործառնական հետազոտությունների իրականացում.<br>I տարի – 20 483 եվրոյին համարժեք դրամ<br>II տարի – 100 000 եվրոյին համարժեք դրամ<br>III տարի – 0 եվրոյին համարժեք դրամ<br>Ընդամենը – 120 483 եվրոյին համարժեք դրամ:</td></tr>
</table>

13/6.3

9. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ մոնիթորինգային համակարգի հզորացում, ընթացիկ համաճարակաբանական հսկողության իրականացում, մոնիթորինգային այցեր և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծրագրի հիմնական բաղադրիչների գնահատում.
   I տարի – 70 045 եվրոյին համարժեք դրամ
   II տարի – 24 494 եվրոյին համարժեք դրամ
   III տարի – 12 374 եվրոյին համարժեք դրամ
   Ընդամենը – 106 913 եվրոյին համարժեք դրամ:
10. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի վերանորոգման աշխատանքներ.
   I տարի – 57 878 եվրոյին համարժեք դրամ
   II տարի – 0 եվրոյին համարժեք դրամ
   III տարի – 7 890 եվրոյին համարժեք դրամ
   Ընդամենը – 65 768 եվրոյին համարժեք դրամ:
11. Համակարգչային տեխնիկայի և կահույքի ձեռքբերում.
   I տարի – 2 541 եվրոյին համարժեք դրամ
   II տարի – 0 եվրոյին համարժեք դրամ
   III տարի – 0 եվրոյին համարժեք դրամ
   Ընդամենը – 2 541 եվրոյին համարժեք դրամ:
12. Ծրագրի շրջանակներում օգտագործվող ավտոմեքենաների տեխսպասարկում, ապահովագրություն,վառելիքի գնում.
   I տարի –5 998 եվրոյին համարժեք դրամ
   II տարի – 4 798 եվրոյին համարժեք դրամ
   III տարի – 3 597 եվրոյին համարժեք դրամ
   Ընդամենը – 14 393 եվրոյին համարժեք դրամ:
13. Տեղեկատվական նյութերի վերամշակում.
   I տարի – 900 եվրոյին համարժեք դրամ
   II տարի – 0 եվրոյին համարժեք դրամ
   III տարի – 0 եվրոյին համարժեք դրամ
   Ընդամենը – 900 եվրոյին համարժեք դրամ:
14. Մեթադոնային բուժման տրամադրում.
   I տարի – 98 153 եվրոյին համարժեք դրամ
   II տարի – 77 881 եվրոյին համարժեք դրամ
   III տարի – 58 465 եվրոյին համարժեք դրամ
   Ընդամենը – 234 499 եվրոյին համարժեք դրամ:
15. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում.
   I տարի – 1 918 եվրոյին համարժեք դրամ
   II տարի – 973 եվրոյին համարժեք դրամ

13/6.3

   III տարի – 1 068 եվրոյին համարժեք դրամ
   Ընդամենը – 3 959 եվրոյին համարժեք դրամ:
16. Աշխատակիցների բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերում.
   I տարի – 3 337 եվրոյին համարժեք դրամ
   II տարի – 3 337 եվրոյին համարժեք դրամ
   III տարի – 0 եվրոյին համարժեք դրամ
   Ընդամենը – 6 674 եվրոյին համարժեք դրամ:
17. Նախատեսվում են դրամաշնորհային (ենթադրամաշնորհի) գումարի հատկացումներ ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին, ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին, «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ին և ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ որպես մասնակից կողմեր (անհրաժեշտության դեպքում աղյուսակում ներկայացված գումարների շրջանակներում կազմակերպությունները բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հաստատմանը կներկայացնեն առանձին ծրագրեր):
   Ծրագրի իրականացման 3 տարիների ընթացքում ենթադրամաշնորհառու կազմակերպություններին հատկացվող գումարները

| **Ենթադրամաշնորհառու** | **I տարի** | **II տարի** | **III տարի** | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|
| ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ | 119.354 եվրո | 225.837 եվրո | 132.162 եվրո | 477.353 եվրո |
| ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ | 62.998 եվրո | 62.998 եվրո | 91.712 եվրո | 217.708 եվրո |
| «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ | 13.168 եվրո | 12.168 եվրո | 13.168 եվրո | 38.504 եվրո |
| ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին | 22.109 եվրո | 22.109 եվրո | 17.032 եվրո | 61.250 եվրո |
| **Ընդամենը** | **217.629 եվրո** | **323.112 եվրո** | **254.074 եվրո** | **794.815 եվրո** |

13/6.3

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր, որոնք ներառում են գրասենյակային պահպանման (կոմունալ) ծախսերը, կապի ծառայությունները, աուդիտորական ծառայությունները, գործուղման ծախսերը, համակարգող խմբի աշխատավարձերը, հարկերը և աշխատակիցների բժշկական ապահովագրությունը - 312 416 եվրոյին համարժեք դրամ: |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի,<br>- ՀՀ ֆինանսների նախարարության,<br>- ՀՀ առողջապահության նախարարության ստորաբաժանումների,<br>- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության,<br>- Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների ենթակայության տակ գտնվող բժշկական հաստատությունների,<br>- ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի,<br>- ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի,<br>- «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի,<br>- ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի,<br>- ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի,<br>- Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և այլ միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկար[illegible] | Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ՝<br>- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին,<br>- Հիմնադրամի տեղային գործակալին,<br>- ՀՀ առողջապահության նախարարությանը,<br>- ՀՀ ֆինանսների նախարարությանը,<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀՀ առողջապահության նախարարության
Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար — Հ.Հարությունյան

Կատարող՝
ՀՀ առողջապահության նախարարության
Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի մոնիթորինգի և գնահատման մասնագետ — Ա. Հարությունյան
Հեռ՝. 54 36 5[illegible]

13/6.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1158-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/30355-15 և հոկտեմբերի 12-ի N 06/3-3/30051-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 12-ի N ԱՄ/22.2/11759 -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 2» ծրագրի մասին» N Մ-070-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-1004-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռիխտեր-Լամբրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02542882) 2015 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուբրիկանտների մատակարարում՝ 2,640,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1159- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 02-Ի N Մ-1103-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախա-րարության մարդասիրական օգնության հանապետական կենտրոն ՊՈԱԿ-ի 2015 թվականի հոկտեմբերի 19-ի N 530 գրությունը,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապե-տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (6)» N Մ-1103-Ա որոշման 1-ին կետերում «11 կգ քաշով» բառերը փոխարինել «9 կգ քաշով» բառերով, և «42,675 հնդկական ռուփի» բառերը փոխարինել «42,807 հնդկական ռուփի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1160 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 13-ի N 07/80-2/30151-15 և հոկտեմբերի 12-ի N 06/3-3/30085-15 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 13–ի N 03/07-1/12132-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ անհատ բարերար Հրաչ Հանեսյանի կողմից Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի (Հայոց ցեղասպանությունը վերապրած Ավրորա Մարդիգանյանին պատկանող ճամփորդական ճամպրուկը, 1 տեղ, 45.81 կգ ընդհանուր քաշով, 750 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1161-Ա**
**քաղ. Երևան**

## «ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 16-ի N 07/80-2/30707-15 և հոկտեմբերի 20-ի N 06/3-3/31416-15 ու Հայաստանի Հանրապետության առողջա-պահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 16-ի N ԱՄ/22.2/11995-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Օլբորգի քաղաքապետարանի կողմից «Jobcenter» հասարակական կազմակերպության միջոցով աջակցության նպատակով «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (բժշկական սարքավորումներ ու պարագաներ, մեկ բեռնարկղ՝ 223 տեղ, 4,780 կգ ընդհանուր քաշով, 25,000 դանիական կրոնին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:
2. «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1162 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի հոկտեմբերի 23-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## «ՀԱՂԹԵՆՔ ԴԻԱԲԵՏԸ ՄԻԱՍԻՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 26-ի N 07/80-2/32287-15 և հոկտեմբերի 28-ի N 06/3-3/32604-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 26-ի N ԱՄ/22.2/12321-15 եզրակացություն-ները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վերահսկիր դիաբետը, ապրիր լիարժեք կյանքով» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Հաղթենք դիաբետը միասին» հիմնադրամի կողմից ձեռք բերված և իր անունով ուղարկված բեռի (գլիկոլիզացված հեմոգլոբինի սարքեր և դրանց թեստերը, 8 տեղ, 143.2 կգ ընդհանուր քաշով, 15,434 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Ներմուծվող բեռը անհատույց բաշխվելու է դիաբետիկ կենտրոններին:

2. «Հաղթենք դիաբետը միասին» հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1163 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 27-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Անդրե Ղուկասյանի կողմից Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հասցեով ուղարկված ավիացիայի ուսուցման սարքավորումների (920 կգ ընդհանուր քաշով, 35,400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,810 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսվում է անհատույց հանձնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի վարչությանը:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1164 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 26-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Խորեն Մարդոյանի կողմից Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հասցեով ուղարկված մակետային ինքնաթիռների (մեկ տեղ, 4,5 կգ ընդհանուր քաշով, 835 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 50 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓԵւՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսվում է անհատույց հանձնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի վարչությանը:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**29 հոկտեմբերի 2015 թվականի N Մ - 1165 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 28-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից ձեռք բերված ազդարարման սարքավորումները (П-166М) (5 հատ, 484,135 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-615-Ա որոշմամբ (2015 թվականի հոկտեմբերի 2-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1166 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N Մ-065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 28-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի մասին» N Մ-065-Ա (2015 թվականի հոկտեմբերի 2-ի N Մ-1024-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2015 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված՝ N 208/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում «Ռեգուլյար» տեսակի բենզինի մատակարարում՝ 877,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**29 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1167-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՆԱՆՑ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԽԱՂԱԴԱՇՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 26-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 117,505,740 դրամ ընդհանուր արժողությամբ «Բանանց» ֆուտբոլային ակումբի խաղադաշտի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ձեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2015 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղադաշտի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 20,695,740 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են սույն որաշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) խաղադաշտի արհեստական խոտածածկ՝ տեղադրման նյութերով և պարագաներով ու մարզագույք՝ 166 տեղ, 25,856 կգ ընդհանուր քաշով, 96,064 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7,900 եվրո, «ՄՃՓ» ՏՄ.

2) խաղադաշտի արհեստական խոտածածկի ռետինե գնդիկներ՝ 91 տեղ, 93,080 կգ



ընդհանուր քաշով, 14,676.80 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 22,400 եվրո, «ՄՃՓ» ՏՄ.

3) խաղադաշտի արհեստական խոտածածկի ռետինե գնդիկներ՝ 22 տեղ, 22,180 կգ ընդհանուր քաշով, 3,496 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5,600 եվրո, «Արարատյան» ՏՄ:

4. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«23» նոյեմբերի 2015թ.

**«Բանանց» ֆուտբոլային ակումբի խաղադաշտի վերակառուցում»**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացման նպատակով Երևանի Ջիվանի 2 հասցեում «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության համար, արհեստական խոտածածկով խաղադաշտի վերակառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև) և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաքի Ջիվանի 2 հասցեում՝ սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 117,505,740 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Ջիվանու 2, ՀՎՀՀ՝ 02565965): |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Խաղադաշտի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում 20,695,740 դրամ՝ 2015 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:<br>2. Արհեստական խոտածածկի, անհրաժեշտ սարքավորումների և նյութերի ներմուծում՝ 86,460,000 դրամ ընդհանուր արժեքությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, նոյեմբերի 15-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:<br>3. Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 10,350,000 դրամ, նոյեմբերի 15-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Խաղադաշտի արհեստական խոտածածկի հիմքի նախապատրաստման շինարարական աշխատանքների իրականացում՝ 20,695,740 դրամ,<br>- արհեստական խոտածածկի (տեղադրման նյութերով և պարագաներով)՝ 90,634 եվրոյին համարժեք դրամ և մարզագույքի՝ 5,430 եվրոյին համարժեք դրամ, փոխադրման ծախսերը կկազմեն 8,200 եվրոյին համարժեք դրամ, ներմուծում.<br>- արհեստական խոտածածկի ռետինե գնդիկների՝ 18,172.80 եվրոյին համարժեք դրամ, փոխադրման ծախսերը կկազմեն 29,000 եվրոյին համարժեք դրամ, ներմուծում.<br>- արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 18,815 եվրոյին համարժեք դրամ.<br>- կվարցային ավազի՝ 6,600 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, ներառյալ փոխադրման ծախսերը, ներմուծում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

[illegible] Ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան ____________

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հոկտեմբերի 2015 թվականի N Մ-1168-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հոկտեմբերի 23-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մարզահագուստի տարբերանշանների (մեկ տեղ, 3 կգ ընդհանուր քաշով, 960 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 110 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**23 հոկտեմբերի 2015 թվականի N Մ- 1169 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ- 40-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի 2015 թվականի հոկտեմբերի 14-ի N 18 գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 10-ի «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ռուսական ուղղափառ եկեղեցու կաթողիկե տաճարի կառուցում» ծրագրի մասին» N Մ-40-Ա (2010 թվականի ապրիլի 30-ի NՄ-277-Ա, 2013 թվականի մարտի 15-ի NՄ-158-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի NՄ-101-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1234-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**